ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԸ

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԵԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑԸ

Վ. Մ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Գրողին լավ հասկանալու համար պետք է լինել նրա հայրենիքում. ասել է, թե նրա ստեղծագործության մեջ պետք է արտացոլված լինի ժողովրդի կյանքը՝ իր բոլոր կարևոր չափումներով։ Մեծ արվեստը ծնվել է հենց այդ կարևորն արտացոլելու ծարավից։ Հետևաբար, ով չի եղել «քաղցր ու վսեմ» Հայաստանում, ծանոթ չի նրա դաժան ու վեհ պատմությանը, երկյուղած լռությամբ չի կանգնել նրա անխորտակ ու փլատակված կոթողների հանդեպ, Իսահակյանի պոեզիայի շռայլ դույների, նրա մտքերի ու զգացումների տիրական պարզության մասին չի կարող ամբողջական պատկերացում կազմել։ Երբ տեսածից են գնում դեպի պատկերածը, քիչ կորուստներ են ունենում, և նվաղում են անպտուղ ենթադրությունները։ Բայց պատահում է, որ գրողը թողնում, հեռանում է հայրենիքից։ Աստանդական այդ կյանքի բոլոր դառնությունները պռունկ-պռունկ ըմպել է նաև Ավետիք Իսահակյանը։ Սակայն ուր գնացել, իր հետ տարել է Հայաստանն ու նրա պատմությունը։ Եվ դա նրա փրկությունն էր։ Բանաստեղծի և հայրենիքի ճակատագրերի անխզելիությունը, նրա կարոտն ու թախիծը, նրա մտորումների՝ երբեք չծերացող աշխարհը, ամենօրյա ու դաժան փորձությունների ենթարկվեցին օտար ափերում, ուրիշ երկնքների որոտների տակ։ Ուրեմն, Իսահակյանին խորապես ընկալելու համար պետք է ճանաչել նաև դեգերումների միջով անցած այն Հայաստանը, որին նույնպես լավագույն ապագայի հույսեր ներշնչողը «հայրենի գրականությունն է եղել»[1]։

Իսահակյանը մեծ բանաստեղծ է և նույնքան էլ մեծ մարդ ու քաղաքացի։ Ամեն անգամ նրա մասին խորհելիս մտաբերում եմ այն եղևնին, որի դժվարին ճակատագրի պատկերը ստեղծել է Հայնրիխ Հայնեն։ Ահա նա, այդ կանաչ և անկոտրում համառությունը, որ քարերը ճեղքելով, լեռան գագաթից իր արմատները հասցրել է մինչև ստորոտը։ Եղևնին ստիպված շրջանցել է քարերը կամ արմատներով ճեղքել, փշրել դրանք, մի բուռ հող գտնելու և ամրանալու համար։ Տպավորությունն այնպիսին է, որ եթե այդ ծառը չլիներ, լեռը կզրկվեր հավասարակշռությունից և կտապալվեր։ Այդպիսին են նաև ճակատագրերն այն մեծ մարդկանց, որոնք արմատներ են ձգել հողում ու ամրացել, հաղթահարելով ամեն խութ ու արգելք։ Անընկճելիության այս պատկերը հարկ համարեցինք հիշեցնել հենց սկզբից, որպեսզի հետագայում հարկադրված չլինենք ասել ամեն ինչ *(որ հավասար է ոչինչ չասելուն) ապացուցելու համար, թե ինչու օտարության մեջ, թափառումների ճանապարհին Իսահակյանը թեև ծռվել, բայց չի կոտրվել, տատանվել է, բայց արմատահան չի եղել, երազել է, բայց երկրից չի կտրվել։ Որքան շատ երազանքների*

[1] К. Маркс и Ф. Энгельс, Об искусстве, М., 1967, стр. 453.

փլուզում է ապրել, այնքան ավելի խորն են նրա արմատները մխրճվել հողում, այնքան ավելի է նա լցվել աշխարհի ցավերով։ Այդպես են բանաստեղծի սիրտը և աշխարհը գալիս, հավասարվում իրենց ճակատագրերով։ Ասվածից հետևում է, որ դարերը շատ քիչ բան փոխանցած կլինեին իրար, եթե չլինեին մեծ մարդիկ, հետևաբար՝ «կորցրած կլինեին իրենց հավասարակշռությունը»։ Դրա ապացույցը՝ մարդկության պատմության այն հարյուրամյակներն են, որոնց հոգևոր ու մտավոր կյանքի պատկերը թերի է հասել մեզ՝ խոշոր մտածողների ու արվեստագետների «բացակայության» հետևանքով։ Հին աշխարհը մեծերին հանդուրժել է մինչև որոշ ժամանակ։ Նրան անհանդուրժելի է մարդասիրական մտքերի ու ապրումների այն կապը, որ նրանը ստեղծում են դարերի ու ժողովուրդների միջև։ Այդպիսի մի աշխարհում աչք բացեց Իսահակյանը։

Բանաստեղծի մանկության տարիներին հայ իրականությունը, իր ամբողջ լայնությամբ ու խորությամբ, ակոսված էր արդեն այն մտքերով ու զգացումներով, որոնցով նա պիտի համակվեր հետագայում։ Բավական է հիշել, որ Իսահակյանը (հայ նոր գրականությունն ընդհանրապես) սկիզբ է առել Աբովյանի «Վերքից», հայ ժողովրդի հոգևոր այդ անսպառությունից։ «Հին փիլիսոփաները հավատում էին,— գրել է Իսահակյանը,— որ եթե աստված ուզում է մարդկային աշխարհում պատմական մի մեծ գործ կատարել, ստեղծում է իր կամքի կատարածուն, առնում է մարդկանց միջից մեծագույնը, ընտրելագույնը, նոր լեզվով ասած՝ ժամանակը իր ձգտումները, հարցերը, իր առաջադրանքները խտացնում է մի մեծ մարդու մեջ, մի գլխավորող հանճարի մեջ՝ կենսագործելու համար տվյալ էպոխայի այդ գաղափարները, ձգտումները... Աբովյանը այդ վեհ առաքելության ընտրելագույն պատգամախոսն էր, ծնված... ժողովրդի դարավոր ընդերքից»։ Այնուհետև, «Վերքը» կարդալիս մենք չզգացինք վերք ու ողբ, մենք չտխրեցինք, մենք չընկճվեցինք հայկական վշտով ու վերքով, թեև լցվեցինք վրիժառությամբ, այլ գերազանցապես վառվեցինք հայրենասիրությամբ, արիությամբ ու հերոսությամբ, մենք թևավորվեցինք ապագայի շքեղ տեսիլներով»[2]։

Դժվար չէ նկատել, որ այս ոգեշունչ խոստովանանքում որոշակիորեն նշված են նաև Իսահակյանի պոեզիայի մեծ սկիզբն ու շարունակությունը։ Կար նաև երկրորդ ակունքը՝ իր էպոխայի ամենատիրական և ներշնչող դեմքը՝ Նալբանդյանը, որ «Գրեթե մի ամբողջ դար լուսավորում էր մեր ուղին, ընդարձակում մեր մտահորիզոնը իր վսեմ իդեալներով, անձնազոհությամբ, մարտնչող բնավորությամբ»[3]։ Իսահակյանի հոգևոր ակունքներից երրորդը՝ Պուշկինն էր, ռուս ժողովրդի զգացմունքների, նրա տենչերի, երազների, նրա տառապանքների, նրա զայրույթների և կամքի հանճարեղ խտացումն ու կոնկրետացումը, նրա ազատաբաղձ ոգին, որին «խառնել ենք մեր երազներն ու թախիծը»։ Այդպիսի հզորներից եկողը նույնպես պետք է հանճարեղ լիներ։ Սխալ կլիներ այդ ամենից հանգել այն եզրակացության, թե Իսահակյանը կրկնել է իր նախորդներին։ Առհասարակ մեծ գաղափարներն ու զգացմունքները չեն կրկնվում, այլ շարունակում են ապրել, կրելով նոր ժամանակների կնիքը։ Եթե յուրաքանչյուր դարաշրջանի հոգևոր կյանքը ոչ մի ակունք չու-

---

2 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 114։

3 Նույն տեղում, էջ 120։

ննևար անցյալում, կանհետանար իրեն ծնող ժամանակի հետ, եթե ոչինչ չընդօրինակեր ու չփոխանցեր, մարդկությունը առ այսօր միայն մեկ քայլ կատարած կլիներ դեպի քաղաքակրթություն։ Մինչդեռ առաջադիմության ուղին ձգվում է նաև այն անկատար երազանքների ու իդեալների միջով, որ դարեդար փոխանցվում են, լեռնանում այս կամ այն դարաշրջանի հանդեպ և պահանջում իրենց լուծումը։

Նման մի լեռնացում ապրեց նաև հայ ժողովրդի պատմության XIX դարը, որի իրական, այլ ոչ թե օրացուցային, սահմանները հասնում են մինչև XX դարի երկրորդ տասնամյակի վերջը։ Դա մի ժամանակաշրջան էր, որի յուրաքանչյուր թիզ հողը շիկացած էր ժողովուրդների հառաչանքով ու ազատության տենչով, ամեն ինչ փոշորկված և նեղված էր «երկու սարի, երկու դարի արանքում», ամեն ինչ իր ելքն էր որոնում, նույնիսկ այն իղձերը, որ չպիտի «մուտք» ունենային։ Եվ չնայած իրադարձությունների այդ բարդ վիթխարիությանը, շատ բան արտաքուստ թվում էր ծանոթ ու պարզ, իսկ բոլոր հնարավոր խոսքերը՝ ասված։ Մեծերը ծնվում են, թերևս, առաջին հերթին հենց այդ վտանգավոր թվացյալը ժխտելու առաքելությամբ, որովհետև ժողովրդին նոր ճանապարհով տանելու համար, առաջին հերթին պետք է փակել նրա հին մոլորությունների քառուղիները։ Եվ ինչպես հաճախ է պատահում, մեծ գրողը ուրիշին մոլորությունից փրկելուց առաջ, նախ ինքն է մի «կուշտ մոլորվում»։ Այսպես է պատահել նաև ճանճարեղ ոռոնող Իսահակյանի հետ։

Իսահակյանի առաջին տողերում արդեն մի ցաված սիրտ կա, կան վարդի ծոցում շողացող արցունքներ և տխուր հովեր, կա ինքնամոռաց մի սեր, որ պատրաստ է ընդունել և՛ տանջանք, և՛ մահ, լինել ամեն ինչ՝ ծով, ժայռ, արև ու լուսին, միայն թե աշխարհի անեզր տխրության մեջ չխամրեն, չխորտակվեն մարդու գեղեցիկ զգացումները.

Կենսական ծովի ճույզերի միջին
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր.
Կայծակն է զարկում իմ վեսս ճակատին,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Գոռ ալիքները կուրծքս են ծեծում,
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր:
Ինձնից բռնեցեք, խորտակվող մարդիկ.
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր[4]:

Սա Իսահակյանի գեղագիտական ու քաղաքացիական դավանանքն է «էնգլխեն», բայց ոչ անփոփոխ։ Հետևաբար, մեզ չպետք է զարմացնի նույն թվականի (1894) նրա մի այլ խոստովանությունը.

Ապրում եմ մենակ, մարդկանց մեջ օտար,
Մարդկանց սրտերը փակ են ինձ համար[5]...

Հակասությո՞ւն է սա։ Անշուշտ։ Բայց մեկն այն հակասություններից, որ վաղը է՛լ ավելի հաստատուն է դարձնելու խորտակվող մարդկանց նեցուկ դառնալու բանաստեղծի կամքն ու ցանկությունը։ Եվ դա, այդ հակասությու-

4 Ավ. Իսահակյան, Երկեր, Երևան, 1955, էջ 13։
5 Նույն տեղում, էջ 13։

նը, չի առաջացել իր ժամանակի անկումայնության «մոդայիկ» տրամադրությունների զիջումներ կատարելուց, որ հրաժարում կլիներ նախկին մտքից, այլ այդ մտքի և ժամանակի բախումից։ Դա, եթե կուզեք, Իսահակյանի մարդասիրության տեղատվությունն է, բայց ոչ անկումը, աշխարհի ու մարդու ճշմարիտ ճանաչման նրա տառապանքն է, այդ ճանապարհին ստացած նրա վերքը, վերջապես դա մարդու այն կարոտն է, որ ճեղք է տվել մի բուռ հոգ գտնելու և այնտեղ արմատավորվելու համար։ Թեև «ճեղքված», բայց ամբողջական էր Իսահակյանը։ «Մենք աշխարհ ենք եկել ո՛չ թախծելու, ո՛չ էլ հանգստանալու համար։ Մտքերի, զգացումների և իղձերի այն սմանշելի խառվածը, որ այլ կերպ մարդկային հոգի է կոչվում, հենց այն պատճառով է կրում այդ բերկրալի անունը (ի հեճուկս այն անհեթեթությունների, որոնցով շրջապատված ենք մենք), որ ավելի շուտ ուղղված է ապագային, այլ ոչ թե անցյալին։ Մարդ՝ ապագա է»[6]։

Իր հարուստ ճանապարհին Իսահակյանը նաև կորուստներ ունեցավ։ Բայց այդ մեծ ապագան՝ մարդուն երբեք չկորցրեց նույնիսկ տիեզերքի ցավ ու կսկիծի մեջ։ «Ես ուզում եմ կյանքում մի ուժ լինել-ալիք՝ մեռած հասարակության մեջ. ամպ ու կայծակ՝ մեծ ամբոխի վրա... Ես կմնամ միշտ՝ ու քիչ բացառությամբ՝ Անթեյ՝ առավոտ ու իրիկուն... կկարդամ, կխոկամ, կսուզվեմ, կտխրեմ, կթափառեմ, կլամ, կժպտամ, կոգևորվեմ, կշաչեմ, բայց խորը կզգամ ու կխոկամ-խոկա՜մ, խոկա՜մ...»[7]։

Իսահակյանը, իրոք, Անթեյի ճակատագիր է ունեցել. հաղթել է, երբ ոտքը հողին է դրել, պարտվել է, երբ կտրվել է նրանից։ Հետևաբար, սխալ պիտի համարել այն պնդումը, թե Իսահակյանը երբեմն փախուստ է տվել աշխարհից ու մարդկանցից։ Չի փախել, այլ փոթորկվել է, թափառել ու վշտացել աշխարհը գեղեցիկ տեսնելու տենչից։ Աշխարհից փախչողի և աշխարհն ավերողի ցավը չի կարող մեծ լինել «էն սարեն» և խոր «էն ձորեն», չի կարող, որովհետև մեծ վշտի ու դառնության մեջ բանաստեղծը ճանաչում է ոչ միայն իրեն, այլև աշխարհը, մարդուն։ Եթե դրանց մոռացումն այդքան դյուրին լիներ, էլ ինչի՞ց և ինչո՞ւ համար պիտի առաջանար սիրո թախիծը, որ նաև երազանք է։ Չէ, «վիշտ վշտի համար» սկզբունքը խորթ էր Իսահակյանի քնարին։ Խորապես մարդկային է նրա սերը, որի վիշտը միշտ էլ ներող ու մեծահոգի է.

Ծո՜վ, քեզի տամ ճիվանդ սիրտս,
Կուզես լավցրու, կուզես չէ.
Մենակ խաբար տուր խեզն մորս,
Անզուր յարիս չանիծե[8]։

Հանճարը նա է, որ կարողանում է վճիտ հայացքով նայել աշխարհին, նույնիսկ այն պահերին, երբ «արևը խարխափում է խավարի մեջ» և նույնիսկ «կորցնում իր ուղին» կամ երբ ինքն է կորցնում արևի ուղին, կարողանում է պայծառ թախիծ ունենալ և տխուր ուրախություն, իսկ դառը բաժանման ժամանակ հավատարիմ մնալ սիրուն։ Ուրեմն ճիշտ է ասված, որ «կյանքն ան-

---

6 «Русский романтизм», М., 1974, стр. 202.

7 «Սովետական գրականություն», 1975, № 7, էջ 137։

8 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1950, էջ 77։

տանելի կդառնար, եթե նրանում գոնե մի կաթիլ սեր չլիներ»[9]։ Իր ամենամռայլ խոհերի տարիներին անգամ (իսկ դրանք եղել են), երբ «աշխարհը սգի տուն էր» դարձել «հիմնված մահի վրա» և միակ «ելքը» սև քարերին անհույս գլուխ թեքելն ու խոր միտ անելն էր, Իսահակյանի պոեզիայի այդ մեծ կաթիլը չսպառվեց։

Անցյալի հետ զրուցելը դյուրին է, գալիքի հետ՝ դժվար։ Առավել դժվար է, երբ խոսք ես բացում մի գրողի մասին, որ եկել է անցյալից, դարձել քո ժամանակակիցը և մշտապես ապրում է գալիքում։ Երեք իրականություն իր մեջ առած բանաստեղծ է Իսահակյանը։ Այսօր արդեն ճշտելու կարոտ է Չարենցի այն պնդումը, թե Թումանյանը, Իսահակյանն ու Տերյանը մնացել են «երկու աշխարհի սահմանագծում»։ Չարենցի այն պահանջը, թե «ուրիշ պիտի լինի մեր օրերի երգը», ճշմարիտ էր և անառարկելի։ Այդ երգն, անշուշտ, եթե ուզենար էլ, չէր կարող առնչվել հնին, անցյալին։ Դա էլ էր ճշմարիտ, եթե չմոռանանք, որ Չարենցը «հին կամ անցյալ» ասելով, նկատի է ունեցել իր դարն ապրածը։ Իսահակյանի դարն, անշուշտ անցել էր, բայց նա չմնաց երկու աշխարհի սահմանագծում կամ այդ գծի այն կողմում, այլ կտրեց, անցավ դառնալով շարունակություն և շարունակվող մեծություն։ «Ամեն մարդ մի-մի երգ է, ո՛րը լուռ ու խորը, ո՛րը պայծառ ու կայտառ, ո՛րը հիվանդ ու կցկտուր, ո՛րը ուրախ ու քչքչուն... ո՛րը կատաղի ու գոչյուն»[10]։ Այդ մի-մի երգերից է հյուսվել Իսահակյանի մեծ երգը, որի գերագույն նպատակը «կյանքի շղթաները փշրելն էր», այդ կյանքում «ազատություն, սեր և քրտինք սփռելը», աշխարհի վերքը «գրչով, սրով ու սրտի արյունով» բուժելը։ Բանաստեղծի ըմբոստացած այս երազանքը հին աշխարհի սահմանագծում մնալ չէր կարող։

Նոր արվեստի ստեղծման ճանապարհին երբեմն խոցվում էր այն հինը, որ այդ նորի մեջ էր և դառնում էր նրա զինակիցը։ Այդպիսին էր «հնի» աննախանձելի վիճակը 20-ական թվականների առաջին տարիներին, երբ գահընկեց էր արվում Շիլլերը, մերժվում Տերյանը, և գյումրեցի Ավոն՝ «Արազի ափին բոստան» ունենալու իր երազանքով։ Մինչդեռ յուրաքանչյուր խոշոր արվեստագետ հավերժ շարժվող երևույթ է, որը երբեք «կանգ չի առնում այն կետում, ուր վրա է հասել մահը, այլ շարունակում է զարգանալ հասարակության գիտակցության մեջ»[11]։ Գրողի և ժամանակի մշտական փոխհարստացման տեսակետից Իսահակյանն այսօր ավելի է մեծ, քան էր կենդանության օրոք։ Այդպիսին է խոշոր արժեքներ ստեղծած գրողի բախտաբաժինը։

Կա մի իրողություն, որի մոռացումը ցավալի անարդարություն կլիներ։ Չարենցի վերաբերմունքը Թումանյանի, Իսահակյանի ու Տերյանի նկատմամբ հետագայում օրինաչափ փոփոխություն ունեցավ, ավելի ճշմարիտ կլիներ ասել, առավել հասուն դարձավ։ Այն, ինչ «վերջ» էր համարվել, շարունակելի դարձավ, շղթայի օղակ, ինչ «սպառվել» էր, դպրոց դարձավ, ինչի հրաժեշտ էր տվել, հիշեց վերադարձի կարոտով.

Որքան գնում-այնքան խոնարհ,
Այնքան անհուն և այնքան ջերմ,

---

[9] Генрих Гейне, Избранные произведения, М., 1950, стр. 79.

[10] «Սովետական գրականություն», էջ 139։

[11] В. Г. Белинский, Взгляд на русскую литературу, т. II, М., 1841, стр. 164.

Ես խոնարհում եմ քո առջև
Ե՛վ սեր, և՛ սիրտ, և՛ քնար[12]:

Սա նշիշ Չարենցի վերջին տողերն են, վերջին խոնարհումը ոչ միայն Իսահակյանի, այլև կյանքի առջև։ Զարմանալի ճակատագիր։ Ումով սկսել էր, նրանով էլ ավարտեց իր խոսքը Հայնեի հետ սեղան նստած մեծ անհատներին:

Իսահակյանի արվեստի հմայքը տողերի սահունության մեջ չէ, ոչ էլ ոսկերչական հղկվածության, այլ մարդու սիրտը յուրովի խոսեցնելու, նրա մտքերի ու զգացումների աշխարհը փոթորկող բնավորության մեջ։ Փոթորիկ տեսնել այնտեղ, ուր կարծես, ամեն ինչ անշարժացել է. երևույթ նկատել այնտեղ, ուր սովորական աչքը ոչինչ «չի նշմարում» իսկական տաղանդի հատկություն է։ Ասում են փոթորիկը մշտապես երիտասարդ է պահում ժամանակը, հանգցնելով նրա «հոգնած կրակները», բայց և բորբոքելով նորը՝ «խենթացածը»։

Ժամանակը Իսահակյանը դիտեց ու ճանաչեց մարդու մեջ։ Ուրեմն նա պետք է նաև փոթորիկ սիրեր՝ մոնչացող ու արտասվող, հոգնած ու փշրված, բայց փոթորիկ։ Ներքին հավաքվածության և ամբողջականության տեսակետից դարավերջին և XX դ. սկզբներին լայն տարածում գտած դեղագիտական մի շարք սկզբունքներ ու պահանջներ խորթ ու մերժելի էին Իսահակյանի պոեզիային, նրա բանաստեղծական խառնվածքին ընդհանրապես։ Նախ և առաջ երաժշտություն, բանականություն կամ զգացմունք երկընտրանքը երբեք չունեցավ Իսահակյանը։ Ե՛վ միտք, և՛ զգացմունք, և՛ երաժշտություն—սա էր Իսահակյանի Ars poetica-ն, ժամանակի և իր մասին պատմելու, այդ երկուսի որպես մի ամբողջության անունից խոսելու սկզբունքը։

Ռուս գրականության 60-ականներին անվանում են «Այգաբացի գրողներ»։ Գրոհի և փոթորկի բուռն ժամանակաշրջան է ապրել Գերմանիայի հոգևոր կյանքը, համաշխարհային վշաի մի ամբողջ ալիք է անցել դարերի վրայով... Ցուրաքանչյուր ժողովուրդ, վաղ թե ուշ, ունեցել է գրոհի ու փոթորկի, դժվար բացվող ազատության այգաբացի իր երգիչները։ Իր հռչակավոր «Երկու տողում» Նալբանդյանը գրել է «պաշտպանել... խեղճ, հարստահարված, ողորմելի, աղքատ, մերկ և քաղցած հայի առաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը»[13]։ Այդ նպատակին հասնելու համար «չէ պիտո ընկրկենք ո՛չ բանտի, և ո՛չ աքսորի առջև, ոչ միայն բանիվ ու գրչով, այլև զենքով ու արյունով։ Եթե մի օր արժանի լինենք զենք առնուլ մեր ձեռքը և մինչև այժմ քարոզած ազատությանը նվիրել և սրբել մեր արյունով»[14]։ Այսպիսին էր հայ գրողի «ուխտյալ ճանապարհը», նրա նվիրվածության աստիճանը այն նորին, որ «պատերազմելով պիտի կանգնեցներ իր դրոշակը հնության ավերակների վերա»։ Այդ ճանապարհը յուրովի է անցել նաև Ավետիք Իսահակյանը, սկսած «Երգեր ու վերքերից» մինչև «Մեծ հաղթանակի օրը»։ Իսկ այդ «մինչևը» պոեզիայի ու արձակի փայլուն երկեր են, հուշագրություններ, հոդվածներ ու ելույթներ, առասպելներ ու հեքիաթներ, նամակներ ու մանրապատումներ են, ավելի քան վեց տասնամյակ տևած գրառումներ ու զրույցներ են ինքն իր հետ, բայց աշխարհի ու մարդ-

12 Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1967, էջ 457։
13 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 375։
14 Նույն տեղում։

կանց, դրականության ու գրողների մասին, որ «Հիշատակարան» է կոչվում։ Այդ «մինչևը» նաև «Աբու Լալա Մահարին է», որի համաշխարհայնությունը վաղուց է ճանաչվել։

Իսահակյանը երգիչն է հայ իրականության գրոհի ու փոթորկի, որ Աբովյանից սկսվել և տևել է մինչև 1920 թվականը։ Հոգևոր ու մտավոր բախումների, մակընթացությունների ու տեղատվությունների բարդ հակասական, բայց և հերոսական մի ժամանակաշրջան էր դա, տասնամյակներ տևող դժվարին մի այգաբաց, որի ընթացքում ժողովրդի հավատի, կենսասիրության ու դիմադրողականության մի իսկական հրաշք տեղի ունեցավ։ Դամոկլյան սուրը, որ անբաժան էր Արևելքի հին, տառապյալ հայ ժողովրդի ճակատագրից, որքան ավելի էր մոտենում նրա կյանքին, այնքան նոր հանհարներ էին բոցավառվում, որքան ավելի ամուր էին կապկպում նրա թևերը, այնքան ավելի բարձր էր թևածում նրա ազատաբաղձ ոգին։ Անհնար է որոշել, թե որտեղ է ավարտվում արվեստագետը և որտեղ սկսվում զինվորը. «խոսքը զենք էր, միտքը՝ գործողություն»։ Դա մի ժամանակաշրջան էր, երբ վաղեմի պատրանքները խորտակվում էին՝ իրենց տեղը զիջելով իրականության դաժան պատկերներին, նոր երազանքներ էին ծնվում և նոր հիասթափություններ, որոնց միջից, սկզբում աննկատ, բայց կենսական համառությամբ ու վստահությամբ վերընձյուղում էր հեղափոխական մի մեծ հավատ՝ ապագայի նկատմամբ։ Սխալ կլիներ ասել, թե բոլոր շարժումները տանում էին դեպի հեղափոխություն, բայց որ դրանցից ամենաուժեղը, ազդեցիկը և ճշմարիտը հեղափոխությունն էր, անվիճելի է։ Սխալ կլիներ պնդել, թե ամեն հավատ կենսունակ էր, բայց որ ամենազորեղը հեղափոխության հավատն էր, դա նույնպես անժխտելի է։ Երևի այդպիսի դեպքերի կապակցությամբ են ասել, թե գրողի մեծ հավատը ծնվում է ժողովրդի ոչ միայն մարտնչող երազանքներից, այլև նրա մեծ վերքից, պայմանով, եթե նա՝ գրողը, վեր է կանգնած այդ վերքի սոցիալական անդրադարձելիության գաղափարից և նվիրված է նրա ապագային։ Եվ մի՞թե դրա հաստատումը չէ ռուս բանաստեղծի բարձր կարծիքը այդ ժամանակաշրջանի հայ պոեզիայի մասին. «Այդպիսի պոեզիա կարող էր տալ միայն մեծ ապագա ունեցող ժողովուրդը»[15]։ Տեսնել մեծ ապագան մի ժողովրդի, որ մորթոտվում էր, նկատել անմահությունը մի ազգի, որի ամբողջ պատմությունն անցել և անցնում էր մահերի միջով, վերջապես ունկնդիր լինել շղթաներ փշրող հին ձայներին, որ նկել-միաձուլվել են նոր ու հզոր երգերին և հարազատի նման հավատալ բախտի հատուցման գալստյանը, կարող էր և եղավ ռուս հանճարեղ բանաստեղծ Վալերի Բրյուսովը։ Ու զարմանում ես, թե ոչ հեռու ժամանակներում ինչպիսի դյուրությամբ էին ամեն վշտի, տխրության ու հուսահատության մեջ անկումայնություն և հոռետեսություն որոնում, աստղային ամեն ճանապարհի որոնում՝ երկրի վրա մոլորվածության հետևանք համարում. ինչպես էին աշնանային տրամագրությունները, և անգամ դեղին տերևները ու մեռնող օրվա վերջին շշուկները գտնում օտարամուտ, ընդօրինակված և ազգային հողից կտրված... Այդ ամենը, կարծես, հուշ է դարձել, թեև երբեմն-երբեմն «բարոյական անվստահություն» է հայտնվում այդ զգացումների նկատմամբ, երբ խոսք է լինում գրողի լավատեսության մասին։ Մարդկային մեծ վիշտը,

15 Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 134։

ողբերգությունը, ցավը միշտ էլ լավատես են։ Դա ապացուցման կարիք չի զգում։ Եվ այնուամենայնիվ, կուզեինք մեջ բերել չեխ անվանի բանաստեղծ Նեզվալի տողերը՝ գրված ֆաշիստական օկուպացման օրերին.

Այլևս կորցրած ժամանակի հասկացությունը
ժամացույցը զարկում է ողջ գիշեր։
Որպես անլեզու անեծք,
Ինչ որ աեղ հաչում են շները.
Ես վեր եմ թռչում, կարծես փայտի հարվածներից,
Ու մոտենում պատուհանին,
Այնտեղ, ներքևում, սև դիակառքի վրա
Տանում են իմ հայրենիքը...[16]։

Մեր պատմության վերջին հարյուրամյակի հայ խոշոր բանաստեղծներից որ մեկն է, որ այդպիսի ծանր, միաժամանակ նաև ցասում կուտակող զգացում չի ունեցել, տեսնելով (այն էլ քանի տարի) իր հայրենիքը արյան մեջ և սգակառքի վրա.

Թումանյա՞նը.

Ու մեր քարվանը շփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում
Սուզի լեռներում[17]։

Տերյա՞նը.

Հայրենիքում իմ արնաներկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ...

Կամ՝

Արնում՝ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր[18]։

Թե՞ Սիամանթոն.

Ով անեզրություն դիակներու, ի՞նչ չափով
քեզ կրնայի չափել,
Արյուն է որ կը բուրե և ես թափառականս,
արյուն է, որ կշնչեմ...[19]։

Այս է իսկությունը... Եվ չնայած դրան, հայ բանաստեղծը կարողացավ պահպանել իր հայացքի մարդկային պայծառությունը՝ «խելոք տրտմության», ընդվզող վերքերի մեջ, մարդկանց սրտերում վառելով «անհուն վրեժի և ատե-

---

16 «Поэзия социализма», М., 1969, стр. 303.

17 Հ. Թումանյան, Երկեր, հ. I, Երևան, 1958, էջ 98։

18 Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1972, էջ 242։

19 Սիամանթո, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 49։

լության պատգամը»։ Ոգու այս արիությունը դժվար է ձեռք բերվել։ Այդպիսի պայմաններում հակամարդկայինը, ուրեմն նաև անկումայինը՝ վիշտ ու թախիծ չունենալն էր, ցավ չզգալը, երկնքում հողմերի հալածանքին ենթարկված «երկու սև ամպի» մեջ հայրենիքի կիսված ճակատագիրը չտեսնելը... Այսպես է ստեղծվել և այսպիսին էր հայ մեծ պոեզիան՝ ժողովրդի օրհասական տարիներին, երբ ամեն հավատ ու փիլիսոփայություն խոսում էր մարդու և ազատության անունից, բայց մեկը ստրկությունն էր գերագույն երջանկություն համարում, մյուսը՝ չարին չհակառակվելը, երրորդը՝ սրբագործում էր տանջանքը... կար միայն մեկ փիլիսոփայություն, որ մարդու և նրա ազատության հետ էր՝ մարքսիզմը։ Ի դեպ Իսահակյանը 20 տարեկան հասակում խոստովանել է, որ ինքը փշրելու է «բուրժուն, պետությունը, փող, կղեր, գյուղ ու քաղաք» և ստեղծելու է նոր երկիր, որտեղ պիտի աշխատեն, ուտեն և հոդով դեպի վեր սլանան[20]... Եվ «ահա այսպես՝ ես մարքսիստ և նիցշեիստ եմ, սոցիալիստ, անարխիստ, դեմոկրատ «արիստոկրատ»[21]։ Այս խառը տրամադրությունների, ավերումների, ստեղծումների ու երազանքների մեջ, մեզ առաջին հերթին հետաքրքրում է Իսահակյանի՝ մարքսիզմին ծանոթ լինելը։ Որքան էլ պարզունակ և ոչ խորը լինեին Իսահակյանի ըմբռնումները ժամանակի հասարակական մտքի հակոտնյա, բայց ուժեղ հոսանքների մասին, այնուամենայնիվ դրանք որոշակի լույս են սփռում նրա անցած բանաստեղծական ճանապարհի կեռմաններին, նրա տրամադրությունների հակասականությունների և գաղափարական-գեղագիտական պայծառացմանը։ Այս ամենի մեջ և այդ ամենով հանդերձ ամբողջական մնալը բնորոշ է միայն խոշոր անհատականություններին։ Այդ առումով, Իսահակյանը երկու կենսագրություն չուներ—կար միայն մեկը՝ ժողովրդինը, որը էր նաև իրենը.

Տիեզերքը ո՛ղջ—մի մեծ անենուն զանգ,
Եվ ճոգիս—նրա լեգվա՛կը վոեմ...

———

Տիեզերքը գրկած ճամայն—
Զանգի նրման դողանջում եմ.

———

Ու օրերիս քարավանը
Տրխուր-տրտում առաջ կերթա.
Հազար ցավով, մարդկանց ցավով
Ծանրը բեռնած ճամփա կերթա...[22]:

Ակամա մտաբերում ես Պարույր Սևակի «Անլռելի զանգակատունը»։ Եվ մի՞թե դա չէր հայ գրականության ցասկոտ ու բարի ղողանջների խորհրդանիշը, ժողովրդի մռայլվող ու բացվող սրտից խոսող բարձունքը, նրա իդեալների ու երազանքների մեծ անլռելին:

Իսահակյանը այդպիսի մի անլռելի էր, երկրի ու երկնի հետ իրեն մեկ զգացող, աշխարհի ծանրությունն իր ուսերին առած անընկճելի. «Ես սիրում

20 «Սովետական գրականություն», էջ 137։
21 Նույն տեղում։
22 Ավ. Իսահակյան, Երկեր, էջ 80։

եմ երկիրը և տենչում, կարոտում եմ երկնին, և ես շա՜տ սիրեցի և շա՜տ մտածեցի, շա՜տ տանջվեցի ու թափառեցի... Դարեր, դարեր—ապրեցի...»[23],

Բանաստեղծական ու մարդկային խառնվածքով, «կյանքը ճեղքելու» հայացքի սրությամբ և սիրելու կրքոտությամբ «ծովի նման եռացող» սրտով և անձնազոհության վսեմ զգացումով, վերջապես, ճշմարտությունը որոնողի իր երջանկությամբ Իսահակյանը ռոմանտիկ է։ Բայց մեկն այն ներշնչվածներից, որի ամբողջ կյանքը մարդուն, իրական աշխարհին մոտենալու, նրանց ազատության համար փոթորկվելու, տառապելու ընթացք է եղել։ Այդ ճանապարհին բանաստեղծը նաև վիճել է ռոմանտիզմի հետ, իր հանճարին խորթ համարելով այդ հին ու կենսունակ ուղղության այս կամ այն պահանջը, դեղագիտական սկզբունքը։ Որքան էլ ընդհանուր լինեն ռոմանտիզմի հիմնադիր սկզբունքները, միևնույնն է յուրաքանչյուր խոշոր արվեստագետ իր ազգային անհատականության կնիքն է դնում այդ ընդհանուրի վրա։ Նույնիսկ կարելի է ասել, որ դա ինքնատիպ է ու անկրկնելի։

Իսահակյանի ռեալիստ լինելը նույնպես անվիճելի է։ Դժվար է, թերևս դրա հարկը չկա էլ, ստույգ որոշել, թե որտեղ է ավարտվում ռոմանտիկ Իսահակյանը և որտեղից սկսվում նրա ռեալիզմը։ Այդպիսի երկրաչափական պարզ սահմանագծեր չեն լինում ոչ մարդկային հոգում, ոչ էլ դրականության մեջ։ Իրողությունն այն է, որ աշխարհընկալման և աշխարհով հպարտանալու ռոմանտիկական ծփանքը երբեք չսպառվեց ու «չվտարվեց» նրա պոեզիայից։ Իսահակյանը ստեղծել է մեծ փորձության, գիմադրողության և ընդվզման պոեզիա, որի սոցիալիստական հետագա ընթացքը բնական է, «ներսից եկող»։ Այդ պոեզիան սնողը թեև գյուղացիական Հայաստանն էր, բայց Իսահակյանը գեղջուկ չէր։ Հայաստանի (և ոչ միայն նրա) ամենաինտելեկտուալ բանաստեղծներից էր Իսահակյանը, ամենամասշտաբայինը և բազմակողմանին։ Եվ դա ոչ թե այն պատճառով, որ նա, ինչպես ասում են, շատ երկրներ է «ակոսել»։ Բնավ։ Կարելի է ամեն տեղ լինել, բայց ոչինչ չտեսնել, նույնիսկ մոռանալ սեփական հայրենիքում տեսածն ու ապրածը։ Իսահակյանը տառապող ու ազատաբաղձ Հայաստանի տեսանկյունից է չափել, ըմբռնել ու նզովել կապիտալիստական Եվրոպայի «կարգն ու կանոնը», նրա անմարդկային էությունը։ Եվ ինչ էլ որ նա վերցրել, յուրացրել է, եղել է հայրենիքի ու նրա ճակատագրի հոգևոր պահանջը։ Դրսից սովորաբար վերցնում են այն, ինչով արդեն տոգորված է կամ ինչի ձգտում է ներսը և զորանալու ծարավ ունի։ Հայկական իրականության և նրա գրականության ռոմանտիկականությունը ներմուծված երևույթ չէ, ոչ էլ մեկուսացված է ուրիշ երկրների գաղափարական-գեղագիտական շարժումներից։

Ժողովուրդների ճակատագրերի ընդհանրության, փոխադարձ մերձեցման ու ճանաչման, նրանց մեծ ազգայինի համամարդկայնության տեսակետից XIX և XX դարերը բացառիկ են։ Ինչպիսի չափումների ասես, որ չենթարկվեցին մարդու ներսն ու դուրսը, նրա իրական ու բաղձալի կյանքը, նրա անցյալը, ներկան ու ապագան, նրա տառապանքի ու երջանկության ուղիները, նրա «լինել-չլինելը», լինելու երջանկությունը և չլինելու ողբերգությունը։ Համաշխարհային պատմությունը, թերևս առաջին անգամ էր «ընթանում իրեն»

23 «Սովետական գրականություն», էջ 141։

այդպիսի ալեկոծումներում, խորհելով անցած ու անցնելիք ճանապարհների մասին։

Իսահակյանը հայ ժողովրդի ալեկոծված ժամանակների, նրա մուժիկական թափի արտահայտիչն է, այդ թափին հատուկ տարերայնությամբ ու սահմանափակությամբ։ Նրա և՛ ուժը, և՛ թուլությունը հայրենի հողում են, այլ ոչ թե այն բազմաթիվ ուսմունքներում, որոնց նա հարել է՝ ճշմարտության տևական որոնումների ճանապարհին։ Ինքնին գաղափարը, առանց շփվելու իրականությանը, չի կարող ուժեղ կամ թույլ լինել։ Որտեղ ծնվել, այնտեղ էլ որոշվում են նրա չափն ու կշիռը, նրա կենսունակությունն ու անկենդանությունը։

Գրողի հանճարեղության աստիճանը որոշվում է նրանով, թե ինչպես է նա ազդում իրեն ծնած դարաշրջանի առաջադիմությանը, տեսնում ու նկարագրում այն նորը, որ երբեմն դեմ է իր համակրած դասակարգին։ Այստեղից հետևում է նաև, որ գրողը կարող է շատ բաներում սխալվել կամ մոլորվել, միաժամանակ «համակրել և նույնիսկ ծառայել հեղափոխությանը», ինչպես ասենք Տուրգենևը, Տոլստոյը... դա արվեստագետի զգայուն սրտի հատկություն է, նրա ազնիվ անկեղծության և հայացքի ուղղամտության արտահայտությունը։ Այդպիսին էին Իսահակյանի սիրտը, հայացքն ու անկեղծությունը, որոնք բացում են ոչ միայն բանաստեղծի, այլև բոլորի աշխարհը։ Առանց այդ երկակի բացման շատ բան փակ կմնար, պակասավոր կլիներ աշխարհի մեր իմացությունը, փոքրերը կխաբեին մեծերին, մանրուքները իշխող կդառնային և կջնջեին մնայունի ու անցողիկի սահմանները։ Բացողի ուժը նրա բացածի կարևորության մեջ է։ Իսահակյանը բացվել է աշխարհի և իր կարիքից, կյանքում ոչինչ և ոչ ոքի տգեղ չտեսնելու կարոտից։ Այդպիսի կարոտ միայն մեծերին է տրվում, որ սոցիալական պայմանավորվածություն ունի և ուղղվածություն։ Բոլոր իսկական արվեստագետները նկատել են դարաշրջանի հանցանքը, տարբեր է եղել նրանց պատժաչափը։ Մեկինը՝ լիբերալ, մյուսինը՝ դեմոկրատական, երրորդինը՝ հեղափոխական, սակայն կար և չորրորդը, որ սրբագործում էր հանցանքը՝ պատիժը համարելով հերձվածողություն... Իսահակյանը հատուցման դեմոկրատական թևի արտահայտիչն էր, առանց որի անհնար պիտի լիներ այն միակ ճշմարիտ քայլը, որ կատարեց բանաստեղծը, դառնալով ազատության երկրի երգիչն ու քաղաքացին։ Իսահակյանի պոեզիան «ոտից գլուխ» մի սիրտ է, «դրսից ու ներսից» աստվածային, այսինքն մարդկային։ Եվ հարկ չկա զարմանալ, որ հենց «այդպիսի արվեստագետներն են նաև կորուստներ ունենում, միայն նրանք են բախվում ծանր, դժվարին արդելքների, որովհետև միայն նրանք են հրաժարվում իրենց մտքերը վաճառելուց»[24]։ Յուրաքանչյուր խոշոր բանաստեղծ ունի իր «Ֆաուստը», իր «Եվգենի Օնեգինը», իր «Վերքն» ու «Ինչ անելը», ասել է, թե իր կյանքի ուղին կամ դրա մի կարևոր մասը ընդգրկող գլուխգործոցը։

«Աբու Լալա Մահարին» Իսահակյանի «Ֆաուստն» է։ Այդ պոեմը եթե հանճարեղ անակնկալ էր հայ պոեզիայի պատմության մեջ, ապա միանգամայն բնական ու օրինաչափ երևույթ էր բանաստեղծի ստեղծագործական կենսագրության, նրա անցած և անցնելիք ճանապարհի տեսակետից։ Դեռևս վաղ շրջանի բանաստեղծություններից սկսած Իսահակյանը հռչակել է փորձու-

[24] Б. Песис, От XIX к XX веку, М., 1968, стр. 81.

թյունների պահին «միշտ և ամենուր մարդ մնալու» իր սկզբունքը։ Պնդել է նաև, թե «լացս տարեք ծովերին ու անապատին, բայց մարդու մոտ չտանեք»։

Իր նախորդ մտքի ժխտումն է այս, թե՞ մոռացկոտության արտահայտություն։ Բարեբախտաբար ո՛չ մեկն է, ո՛չ էլ մյուսը։ Երկրորդ դեպքում Իսահակյանը նկատի ունի «գծուծ ու նանիր, վախկոտ ու նենգամիտ, կեղծ ու դավաճան» մարդկանց՝ «ագահ ստության գերի», իրենց ստոր ու ստրուկ աշխարհով, մի աշխարհ, որ արժանի չէ մարդու արցունքներին, այլ միայն նրա ատելությանը։ «Աբու Լալա Մահարի» պոեմում ստոր մարդկանց և նրանց աշխարհը նզովում է մի անհատ, որ պատրաստ է, առանց վարանելու, կախաղան բարձրանալ՝ հանուն ճշմարտության, անարդար է համարում այն պայքարը, որ «մղվում է աղքատի բերնից արնոտ հացը խլելու», նրա տանջված ճակատի քրտինքը ծծելու համար, լցված է անհուն վրեժով և ատելությամբ։ Այս ալեկոծ մտորումներից ու տագնապներից է ծնվել Մահարի մարդն ու փիլիսոփան, սիրողն ու ատողը, դավի, մահի ու ցավի աշխարհում խոշտանգված, բայց երբեք չարի առաջ ծունկի չեկած անհնազանդ սիրտը, մի աշխարհ, ուր «հզոր ոսկին գողին դարձնում է ազնիվ, ապուշին՝ հանճար, վախկոտին կտրիճ, տգեղին՝ չքնաղ և պոռնիկին՝ կույս»[25], մի աշխարհ, ուր լավը զոհ է գնում վատին, թույլը հանցավոր է, հզորն՝ արդար։ Քառորդ դար հետո Իսահակյանը նորից է անդրադառնալու փողի այդ կեղծող զորությանը։ «Փողը նվաճեց բոլորին և ամեն բան շուկա հանեց՝ սեր, առողջություն, տաղանդ, ազատություն, կին ու պատիվ...»։ Մահարին «փախել» է անապատ, իրեն ատելի աշխարհի հետապնդումից, մնալով տանջվող ու տառապող մարդու հետ և նրա աշխարհում։ Նա ատում է բուրժուական իրականությունը, որ բարոյական իր բոլոր օրենքներով ու նորմերով թշնամի է մարդկային «հոգու թռիչքին ու վսեմ մտքերի սլացումին», սուր է՝ անզորի գլխին հավիտյան կախված։ Մի իրականություն, ուր հողի մարդը «չոր քար է կրծում իր հացի հանդեպ»։ Փողի կեղծող ուժի իսահակյանական մերկացումները մեզ տանում են դեպի Շեքսպիրի հայտնի տողերը. ոսկու կարմիր ու թանկարժեք փայլը աստծու զորություն ունի։ Նա կարողանում է սևը դարձնել սպիտակ, զառամյալին՝ պատանի, այլանդակին՝ գեղեցիկ, վախկոտին՝ քաջարի, չարը՝ բարի, ստորը՝ վսեմ, նա ստիպում է հարգել խայտառակությունը և մեծարել գողերին։ Այսպիսին է փողի «ամենազորության էությունը»։ Գյոթեն այն դիտել է, որպես բոլոր սրտերի փորձաքար։ «Այս երկաթե դարում առանց փողի նաև ազատություն չկա» (Պուշկին), «Փողի քսակը, փողի քսակը, բարձրացնում է մարդու հասակը» (Թումանյան), Վահան Տերյանը դառնությամբ է լցվել, տեսնելով ոսկով գնված գեղեցկությունը։ Փողի, այդ հին կեղծարարի ասպատակությունները տեսնելը նորություն չէ, բայց «հինն ասելու կերպը և՛ նոր է, և՛ համարձակ»։ Չմոռանանք նաև, որ պոեմը գրվել է 1905 թ. հեղափոխության պարտությունից չորս տարի անց, երբ շատ տաղանդներ ծուլեցին ու կոտրվեցին ժամանակի հոգևոր հետադիմության հարվածներից, այդպես էլ չկարողանալով «մեծ տարիների ականատես» դառնալ։ Դա այնպիսի ժամանակ էր, երբ կոչ էր արվում «մարդկային սիրտն ազատել կյանքի բեռից՝ տիեզերքում ազատ թռչելու համար, փառաբանվում էր նպատակ չունեցող արյունն ու մոխիրը, «ներքին բանտում» միայնակ ապրող, և ապրելու համար

25 Ավ. Իսահակյան, Երկեր, էջ 112։

«ստող մարդուն»[26]։ Իսահակյանն ընթացել է ուրիշ ճանապարհով, ընթացել է՝ մարդկային հոգսերով լեցուն սրտով, դեմ է եղել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին «կապույտ բանտին», ներքին ու արտաքին կեղծիքին, հպարտության ղդացում է ապրել, ըմբոստության, այլ ոչ թե «երանելի մահվան» ու «աներազ երազանքների մեջ»։

Այս դարաշրջանային ընդհանրացումների կողքին, իհարկե, կան նաև ափերից դուրս եկած ցասման ու նզովքի ավելցուկներ, ավերելու ուժեղ կըրքեր, չափազանցումներ ու ոչ մի չափի չենթարկվող ժխտողական տրամադրություններ։ Ուրիշ «ավելցուկներ» էլ կարելի է նշել, սակայն դրանք չեն կարող ստվերել այն մեծ ճշմարտությունը, որին հանգել է Իսահակյանը՝ ժամանակի հասարակական, քաղաքական և գեղարվեստական մտքի բարդ խմորումների, հին հումանիզմի որակական փոփոխությունների, հեղափոխության և հասարակության միջև սկսված պայքարի նոր ելքի ճշմարիտ կռահումների և անհույս կանխազգացումների պայմաններում։ Սխալ և հակագիտական կլիներ ժամանակի գրական-փիլիսոփայական հոսանքներից Իսահակյանին անջատելը, մանավանդ, երբ դրանց ազդեցությունների մասին կա նաև բանաստեղծի խոստովանությունը։ Արվեստագետը մեծ է մնում նաև իր կրած ազդեցություններում, իր և ուրիշի մոլորությունների հաղթահարման մեջ։ Ինքնուրույն խոսքը ապրում է նաև այդ հաղթահարման տառապանքը։

Վերջերս լույս տեսան որոշ մասունքներ Իսահակյանի «Հիշատակարանից»[27], որը ինչպես նշված է խմբագրության ծանոթագրությունում, երկարատև ու քրտնաջան աշխատանքով հավաքել, ի մի է բերել անվանի իսահակյանագետ Արամ Ինճիկյանը։ Ծանոթագրությունից նաև տեղեկանում ենք, որ Վարպետի «Հիշատակարանը» ավելի քան վեց տասնամյակի ժամանակաշրջան է ընդգրկում։ Դրա առաջին ընթեռնումն արդեն համոզում է, որ իսահակյանագիտությունը շատ բան վերանայելու ու ճշտելու անհրաժեշտություն է զգալու, հրաժարվելով այս կամ այն քմահաճ ենթադրություններից ու մեկնություններից։ Ինչպես երևում է Իսահակյանը «էն գլխեն» հետևել, չափել ու զննել է իր կյանքի ուղին, դեպքերի թարմ տպավորությունների տակ անդրադարձել ժամանակի և իր փոխհարաբերությանը, իր «ես»-ի ինչպիսին լինելու, նրա հասարակական նշանակության «գաղտնիքներին»։ Դա մի մեծ ու տևական զրույց է ինքն իր հետ, բայց աշխարհի, մարդու ու մարդկության մասին։ Տակավին երիտասարդ Իսահակյանն արդեն ուրվանշել է իր պոեզիայի ընդգրկման շրջանակները. երջանկություն ու թշվառություն, բախտ ու դժբախտություն, արցունք և ժպիտ, տանջանք և ուրախություն, սեր և մոռացություն, կարոտ և վիշտ։ Միայն «ոգևորված սիրտը», այսինքն լավատեսությունը կարող է տանել այդ ամենը։ «Գիրք գրել—մի մեծ կամք է, մի մեծ նպատակ. ապստամբություն առաջ բերել— մի մեծ կամք է, մի մեծ նպատակ»,— գրել է Իսահակյանը 1894 թ.[28]։ Գիրքը և ապստամբությունը՝ հավասարազոր ուժեր են։ Դրանք ծնվում են ժամանակի առաջադրած «ի՞նչ» և

---

26 И. Машбиц-Веров, Русский символизм и путь Александра Блока, М., 1969, стр. 16

27 «Սովետական գրականություն», 1975, № 7։

28 Նույն տեղում, էջ 135։

«ինչո՞ւ» հարցերից։ «Մտածող մարդու միակ երջանկությունը դրանց պատասխանը որոնելն ու գտնելն է»։ Սա Իսահակյանի հավատամքն է։

«Հիշատակարանում» կան նաև այլ մտքեր ու դատողություններ, որ տանում են դեպի «Արու Լալա Մահարին»։ «Կուսական ժպիտը բռնաբարվում է, ծերունու աղոթքը երկինք չի հասնում... մշակի քրտինքը հափշտակվում է,— փողը տիրել է ամեն ինչ,—սերն ու միտքը պղնձով ծախվում է... Օ՜, ես ուզում եմ փշրել, փշրել կյանքը... ես պիտի փշրեմ տղեղ—տգեղ կյանքը—ես պիտի փշրեմ, փշրեմ...»[29]։

Պոեմի փիլիսոփայական մթնոլորտը զգալի է «Հիշատակարանում», բանաստեղծի ձգտումների տարերայնությունը, սերը երկրի և մարդու նկատմամբ նույնպես։ «Ո՞վ է ասում, թե երկիրը չնչին բան է, մարդկությունը՝ նույնպես չնչին. ո՜չ, հազար անգամ ո՜չ...»[30]. ինչ էլ ուզում է լինի, կյանքի գերագույն իմաստը մարդու համար ապրելն է։ Սա Իսահակյանի տառապած ու վերջիվերջո հաղթանակած կենսասիրության նշանաբանն է։

Հայ գրականագիտությունը վաղուց է նկատել, որ Իսահակյանի պոեմում անապատը գեղարվեստական խորհրդանիշ է, իսկ նրա հերոսի փախուստն աշխարհից՝ այդ նույն աշխարհը խորքից ճեղքելու միջոց կամ հնարանք։ Մեզ մնում է միայն ավելացնել, որ աշխարհն իր մեջ առնելը և նրա ամբողջ նողկալիությունը «հեռվից» ցույց տալու ուղին Իսահակյանի հայտնությունը չէ։ Համաշխարհային գրականության ամբողջ XIX դ. ակոսված է կյանքին, իրականությանն ու մարդուն մոտեցող այդօրինակ ռոմանտիկական «փախուստներով»։ Մեկը հին աշխարհի հետ մենամարտելու վայր է ընտրել անապատը, մյուսը՝ փոթորկված ծովը, երրորդը՝ Կովկասյան ապատ լեռները, ուրիշները՝ ամբողջ Եվրոպան։ Բոլորն էլ՝ հայրենիքից դուրս, բայց նրա ճակատագրից անբաժան։ Այդ արվեստագետների խոսքի արտակարգ դաժանությունը, աշխարհը ստրկացնող կեղծիքի վերացման բուռն ձգտումը, ամենուր՝ երկնքում, թե երկրի վրա, նույնիսկ հանդերձյալ աշխարհում անարդարությունը ոչնչացնելու կիրքը, հայրենիքի անապ կարոտից են առաջացել, որ ուրիշ կերպ կոչվում է մոլեգին հայրենաբաղձություն։ 20-ամյա Բայրոնը իր նամակներից մեկում գրել է. «Բնությունից, կարծես, բարի սիրտ էր տրվել ինձ, բայց ինձ այնքան են ճզմել, տանջել ու տրորել, որ սիրտս կոշտացել է՝ շոտլանդացի լեռնականի կոշկատակի նման։ Ամբողջ կյանքում ձգտել եմ դաժանացնել իմ սիրտը, բայց դեռ լիովին չեմ հասել դրան»[31]։ Ավելի քան մեկ դար Բայրոնից հետո և նրանից անկախ նույնն է խոստովանել նաև Իսահակյանը... «Սակայն իմ մաքուր, բնական հայրենասիրությունը վիրավորվեց, արյունոտվեց իմ ժողովրդի կրած անհեռևակայելի ողբերգությամբ... և դա իմ սիրտը լցրեց պեսիմիզմով ու դառնությամբ, նաև զայրույթով»[32]։

Իսահակյանի պոեմում որևէ խոսք չկա հայ ժողովրդի ու նրա դառն ճակատագրի մասին, բայց նրանում փոթորկված ցասումը նաև հայկական ծագում ունի։ Ասում եմ նաև, որովհետև Շիրակում սկիզբ առած նրա աշխարհճանաչումը ընդլայնվել և բանաստեղծին բերել է այն համոզման, որ «սրգի

29 Նույն տեղում, էջ 139։

30 Նույն տեղում, էջ 141։

31 «Европейский романтизм», М., 1973, стр. 338, 339. (Մեջբերումների այս և հետագա ընդգծումները մերն են—Վ. Մ.)։

32 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 169։

տոն» է ոչ միայն իր հայրենիքը, այլև ամբողջ աշխարհը, «որի ցավով բեռնած կերբա իր օրերի բարավանը»: Մեծերը նաև «տառապանքների մեջ են նոր աշխարհներ բացում»։ Իսահակյանը այդպիսի մեծերից է։ Ասում են, բանաստեղծները «հեռվից» ավելի պարզ են լսում ժամանակի ձայները.

Եվ անապատից, ճեռու ծովերից,
Եվ դարբասներից, թե խուլ բանտերից,
Լըսում եմ անվերջ, գիշեր ու ցերեկ
Ողբ ու ճեծեծանք միշտ, ամենուրեք...[33]:

«Հեռվից» լսած, բայց խորապես ապրված, երկրային մի ձայն է «Աբու Լալա Մահարին», ռոմանտիկական հավատի հառաչանք է և լույսի տառապյալից ճանապարհ։ Այդպիսի մի ձայն, այդպիսի մի հառաչանք ու ճանապարհ էր նաև Իսահակյանի նախասովետական շրջանի պոեզիան։

Միշտ չէ, որ գրողի ու նրա հայրենիքի ճակատագրերը նույն ընթացքն են ունենում։ Ժամանակը երբեմն արվեստագետին տեղահան է անում իր հայրենիքից և նետում հեռավոր ու օտար երկնքների տակ։ Այդպիսի բախտ վիճակվեց նաև Իսահակյանին։ Հայ մեծ թափառականը Եվրոպայում փորձում էր գտնել մարդկությանը դժոխքից փրկելու բանական ելքը, դժոխք, որի դանտեական շրջագծերին ավելացել էր նաև հայկական եղեռնը։ Եվ այդ ելքը նա որոնեց «մեծ փիլիսոփաների, գիտնականների, մարգարեների և իր սրտի մեջ»։ Հակասական, իրարամերժ էին նրա գտածները։ Ինչի հետ հույս կապեց, ոնկայուն դուրս եկավ, անհեռանկար։ Ասպետորեն ազնիվ նրա սրտի մեջ անվերջ կուտակվում էին հին ու նոր պատրանքներ և նույն արագությամբ էլ չքանում։ Երկար թափառումներից ու ծանր հիասթափություններից հետո, Իսահակյանը կանգ է առնում նորից, բայց այս անգամ բոլորովին ուրիշ, սոցիալիզմի վրա, համարելով այն ժողովրդի և իր երազների վերջնական հանդրվանը։ Իսահակյանը ականատես չէր ո՛չ Հոկտեմբերյան հեղափոխությանը, ո՛չ էլ նրա նոյեմբերյան արևածագին Հայաստանում։ Բայց տասը օր աշխարհը ցնցած և Ռուսաստանում ազատության նոր դարաշրջան բացած Հոկտեմբերյան որոտներին չէր կարող անտարբեր մնալ այնպիսի մի զգայուն սիրտ, ինչպիսին Իսահակյանն էր։ Չէր կարող նաև այլ պատճառով. նոր վերածնունդ էր սկսվել իր հայրենիքում, որ մշտապես և ամենուր բանաստեղծի հետ էր, ապրում էր նրա կարոտի ու վշտի, նրա տագնապող հույսերի մեջ, նրա հետ էր այն նվիրական հողը, ուր «կան այնքան քաղցր ձայներ՝ հին-հին դարերից եկած, հարազատների ձայներ. նահատակների ձայներ, հերոսների ձայներ»[34]։ Այդ ամենը Իսահակյանը մոռանալ չէր կարող, որովհետև նրան արտասահման էր տարել ոչ թե սոսկ շրջագայելու ցանկությունը, այլ իր հայրենիքի ճակատագրի ծանրությունն ինչ որ չափով թեթևացնելու ուղին, որ ինքը պիտի որոներ ու գտներ։ Ու մինչ նա որոնում էր, իր ժողովուրդն արդեն գտել էր այն հեղափոխության միջոցով և հեղափոխության մեջ։ Իսահակյանի կյանքում սկսվում է հոգևոր վերակառուցման մի նոր էտապ։

---

33 Ա. Վ. Իսահակյան, Երկեր, էջ 50։

34 Ա. Վ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 171։

Շատերի նման նա էլ կարողացավ իր կապերը վերջնականապես խզել այն հին հոդեկերտվածքից, որի անկատար լինելը վաղուց էր զգում, և անցնել նոր աշխարհի կողմը[35]։

Մի անգամ չէ, որ օտար երկրներ թափառելուց հետո Իսահակյանը վերադարձել է հայրենիք. «շա՜տ էի կարոտել հայրենիքս... Օ՜, որքան սիրելի է հայրենիքը, քա՜ղցր ու թանկագին...» (1897 թ.)[36]։

Իսահակյանի պոեզիան այնքան էր լեցուն հայրենիքով, որ թույլ չտվեց բանաստեղծին կոտրվել քաղաքական ծռումներից։ Սահմանագծի այն կողմում մնալու վտանգից նրան փրկեցին իր այնքան պաշտելի Մանթաշի առուների տխուր կարկաչները և սևասիրտ կակաչները, որ ամենուր հիշեցնում էին նրան իր ժողովրդի սպառվող արյունը և խորացող վերքը։ Իսահակյանը չէր կարող այդ արյան ու այդ վերքի դասալիք դառնալ, և չընդունել այն հեղափոխությունը, որ եկել էր վերջ դնելու իր ժողովրդի դարավոր տառապանքներին։

Հեղափոխությանը հաջորդած տարիներին (մոտ երկու տասնամյակ) Իսահակյանը թեև արտասահմանում էր, բայց նոր հայրենիքի ձայները՝ պատռելով կեղծիքի ու զրպարտության թանձր մշուշը, հասնում էին նրան, հետզհետե տիրական դարձնելով Սովետական Հայաստան վերադառնալու նրա վճիռը։ «Հայրենի հողը» լեգենդում փառաբանված է հայրենիքը, որի մի բուռ հողն անգամ անպարտելի է, եթե նրա վրա են իր զավակները։ Ուրեմն պետք է վերադառնալ։ «Որդիական սիրո» մեջ երեք որդիներից միայն մեկն է իր բեկված սիրտը հեռուներից բերում մորը։ Ինքն էլ հեռվում մի բեկված սիրտ էր։ Ուրեմն պետք է վերադառնալ։ «Ռավեննայում» բանաստեղծության մեջ դարերը վայրկյանի պես եկել ու անցել են, մի մարտնչող անմահություն կտակելով Հայաստանին։ Այդ անմահությունից հեռու ապրելն անհնար է։ Ուրեմն պիտի վերադառնալ և հպարտորեն բացականչել.

Հերքը ճիմա քոնն է մի պահ.
Դո՛ւ էլ նայիր սեգ ճակատին,
Ու անցիր...[37]:

Բավական էր, որ Իսահակյանը ոտք դներ հայրենի հողին, որպեսզի նրա քնարը քաղաքացիական նոր հնչեղություն ստանար։ Վերադարձի հաստատման տարիներին քաղաքացին ավելի շատ փորձության ենթարկվեց, քան բանաստեղծը։ Այդ ծանր մտորումների տարիներին հայրենիքից վռնդված դեղին կատաղիները ամեն ջանք գործադրում էին քաշելու նրան դեպի իրենց քաղաքական ճահիճը, որտեղ նա, խորտակվելուց բացի, շահելու ոչինչ չուներ։ Հետադիմության հայ պարագլուխներին Իսահակյանի մեծությունը չէր հետաքրքրում։ Նրանց տանջում էր այն նոր ճեղինակությունը, որ բանաստեղծը ձեռք էր բերելու Սովետական Հայաստանում։ Իսահակյանի հայրենիք վերադառնալը նաև սովետական կարգերի ուժի մի նոր ապացույց էր լինելու։

Մենք արդեն նշել ենք, որ փոքրերն այն ժամանակ են իրենց հպարտ զգում, երբ մանրանում են մեծերը։ Իսահակյանի հայրենասիրությունն այն-

35 В. Баранов. Революция и судьба художника, М., 1967, стр. 455.
36 «Սովետական գրականություն», էջ 141։
37 Ավ. Իսահակյան, Երկեր, էջ 77։

քան էր առողջ, նրա ակնածանքը հայրենիքի նկատմամբ՝ այնքան անկեղծ ու խոր, որ նա չէր կարող այդպիսի հպարտություն պարգևել իր շուրջը վխտացող թզուկներին։ Մեծ արվեստագետը միշտ իր հայրենիքի զինվորն է։ Սակայն լինում են դեպքեր, երբ հայրենիքն է զինվոր դառնում ու պայքարում հանուն իր զավակի փրկության։ Եվ հայրենիքը փրկեց Իսահակյանին։

Այս օրերին մի նոր կարևորությամբ է հնչում կես դար առաջ առաջին անգամ Սովետական Հայաստան ոտք դրած մեծ բանաստեղծի ու քաղաքացու խոստովանությունը. «Եվ ուզում ես սեղմել հոգուդ, համբուրել՝ շղթաները կտրած այս ազատ հողը, որ քոնն է դարձել այսօր և այսուհետև։ Անբուժելի ցավ ես զգում, որ հեռու ես եղել նրանից, որ կորած են անցել օտարության երկար տարիները։ Եվ մի տենչ է վառում հոգիդ հիմա՝ գնել գլուխդ այդ հողին, աչքերդ գոցել ու երազել.

Եվ հնչում է հոգիդ.

Դո՛ւ, հին երկիր, նոր ու պայծառ,
Իմ ժողովուրդ, իմ հա՛ց,
Արևաթև անմահ թռչուն՝
Հուր ու սրից ծնած»[38]։

Հանճարի երիտասարդությունը ստուգվում է նաև մեծ փորձությունների պահերին։ Իսահակյանի քայլերն արդեն ծանրացել էին, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը։ Նրա երազն ընդհատվեց։ Մեզ վաղուց ծանոթ հին ու նենգ թշնամին վերստին թուր էր բարձրացրել ժողովրդի ու նրա հացի վրա։ Բոլորի հետ Իսահակյանն էլ «ներքին մի զորահավաք» ունեցավ։ Նրա պոեզիան հրեղեն ցասում հագավ, մրրիկների ուժ ստացավ և հայրենի խրոխտ սարերի հպարտություն։ Աշխարհում կա երկու ուժ, որ երբեք չեն ծերանում։ Սուրը և կայծակը։ Ավ. Իսահակյանի մեծ կենսափորձի ամփոփումն է սա։ Եվ նրա սուրը կայծակին տվեց՝ լուսավորելով «հայրենիքի ըմբոստ քաջերի և վսեմ ռազմիկների ուղին»։ Բայց սուր բարձրացնելը հաղթանակի կեսն է, մյուսը, որ առավել դժվարին է, այդ սուրը փառքով պատյան դնելն է։ Իսահակյանը ապրեց հաղթանակի ամբողջ բերկրանքը, հպարտացավ ոսոխից բարձր ու հզոր իր ժողովրդի արդար խղճով, գլուխ խոնարհեց մարդկությանը փրկած զինվորների հիշատակի առաջ։ Բանաստեղծի, մարդու ու քաղաքացու զգացումների այդպիսի ներդաշնակություն, խոսքի ու գործի այդպիսի անխզելիություն և անխորտակելի հավատ մարդու, նրա կյանքի ու երազների նկատմամբ, հազվադեպ են լինում։ Այդպիսի մեծ հազվադեպություն է Ավետիք Իսահակյանը, բոլոր սերունդների այդ մեծ ժամանակակիցը, որի անմահության 100-ամյակը նշելու բախտը տրվում է մեկ անգամ։ Եվ դա մեզ է վիճակվել։ Դանտեի շիրմաքարին փորագրված են հետևյալ խոսքերը. His non cedo malis (այստեղ թաղված է մեկը, որ չհնազանդվեց չարին)։ Այդպիսի հանճարեղ «մեկ»-երից է նաև Իսահակյանը։ Բայց այդքանը թերի կլիներ, եթե չավելացնեինք, որ նա բարու հաղթանակի բերկրանքը ճաշակած և նրա սոցիալիստական վեհությունը գովերգած շատերից է։

Ուրեմն բարին ընդ քեզ, մեր մեծ անմահություն։

---

38 Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 177։